Տնային կենդանիների ապահովագրության կանոններ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԷՖԵՍ» ԱՓԲԸ խորհրդի կողմից

Արձանագրություն 01 առ 08/08/2023թ.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է

08 օգոստոսի 2023 թվականից

Կոդ՝04.02.02

Խմբագրություն՝ 1.0

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
ԳԼՈՒԽ 2: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 4
ԳԼՈՒԽ 3: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ 4
ԳԼՈՒԽ 4: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ 7
ԳԼՈՒԽ 5: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ..... 8
ԳԼՈՒԽ 6: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ 8
ԳԼՈՒԽ 7: ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ 10
ԳԼՈՒԽ 8: ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....10
ԳԼՈՒԽ 9: ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ 12
ԳԼՈՒԽ 10: ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ 12
ԳԼՈՒԽ 11. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 13
ԳԼՈՒԽ 12. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ 13

ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Տնային կենդանիների ապահովագրության սույն կանոնների (այսուհետ՝ Կանոններ) հիման վրա «ԷՖԵՍ» Ապահովագրական ՓԲԸ-ն իրականացնում է ոչ կյանքի ապահովագրություն՝ «Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն», «Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն» և «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասերով, որի հիման վրա կնքում է ապահովագրության պայմանագրեր/վկայագրեր (այսուհետև՝ Պայմանագիր) ֆիզիկական անձանց հետ:

1.2. Կանոններում կիրառվող անվանումներն ու հասկացությունները որոշ դեպքերում հատուկ պարզաբանվում են համապատասխան սահմանումներով:

1.3. Եթե որևէ անվանման կամ հասկացության նշանակությունը պարզաբանված չէ Կանոններում և չի կարող պարզաբանվել օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվային ակտերով, ապա նման անվանումը կամ հասկացությունը կիրառվում է իր ուղղակի լեզվական նշանակությամբ:

1.4. Անձը, ով Ապահովագրողի հետ կնքում է Պայմանագիր, այսուհետ անվանվում է Ապահովադիր:

1.5. Կանոններով Ապահովադիր կարող են հանդիսանալ միայն գործունակ ֆիզիկական անձինք:

1.6. Անձը, ում տնային կենդանու հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է ապահովագրության պայմանագրի առարկա, այսուհետ անվանվում է Ապահովագրված անձ:

1.7. Եթե Պայմանագիրը կնքելուց հետո պարզվել է, որ Պայմանագրով ապահովագրվել է 2.2-րդ կետում նշված խմբերից որևէ մեկում ընդգրկված կենդանի, ապա Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը և միակողմանի վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը:

1.8. Պայմանագրով ապահովագրական հատուցումը ստանում է Պայմանագրում նշված Շահառուն, իսկ եթե Շահառու նշված չէ, ապա՝ Ապահովագրված անձի ժառանգը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

1.9. Կանոնների և վերջինիս հիման վրա կնքված Պայմանագրի միջև տարընթերցումների դեպքում գերակայությունը տրվում է Պայմանագրին:

1.10. Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադրին տրվում է Կանոնների մեկ օրինակ, ինչի մասին հատուկ նշվում է Պայմանագրում, որի դրույթները դառնում են Պայմանագրի անբաժան մասը և պարտադիր են Ապահովադրի և Ապահովագրողի համար (այսուհետ՝ միասին՝ Կողմեր):

1.11. Պայմանագրի կնքման ժամանակ Կողմերը կարող են գրավոր (Պայմանագրով կամ առանձին համաձայնությամբ) պայմանավորվել Կանոնների որևէ առանձին դրույթի փոփոխության (բացառման) և/կամ լրացուցիչ դրույթների ավելացման վերաբերյալ:

1.12. Պայմանագրով սահմանված որոշ հասկացություններ.

1.12.1. ***Վնասվածք*** - ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրված կենդանու օրգանների և հյուսվածքների անատոմիական ամբողջականության կամ ֆիզիոլոգիական գործառույթների խախտումներ,

1.12.2. ***էվթանազիա*** - կենդանուն անբուժելի, առավել ցավ պատճառող վիճակներից ազատելու, վարքագծային, ֆինանսական կամ այլ պատճառներով կյանքի դադարեցում,

1.12.3. ***նույնականացման չիպ/միկրոչիպ (այսուհետ՝ Չիպ)*** - էլեկտրոնային սարք, նախատեսված կենդանուն նույնականացնելու համար, որը իրենից ներկայացնում է միկրոսխեմա՝ կազմված ընդունիչից, հաղորդիչից և, յուրահատուկ կոդի պահպանման համար նախատեսված հիշողության բլոկից:

1.12.4. ***տնային կենդանի*** - սույն կանոնների շրջանակներում՝ կենդանիներ, որոնք ընտելացվել են մարդու կողմից և պահվում են տնային միջավայրում, այդ թվում սեփական տան բակում՝ տրամադրելով նրանց ապաստան և սնունդ: Ապահովագրության ենթակա տնային կենդանիների կոնկրետ տեսակները նշվում են Պայմանագրում:

ԳԼՈՒԽ 2: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2.1. Սույն Կանոններով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում.

2.1.1. գույքի ապահովագրության մասով՝ ապահովագրված կենդանու (նրա առողջական վիճակի) վնասվածք ստանալու հետ կապված գույքային շահերը,

2.1.2. երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասը հատուցելու պարտականության հետ (քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն)՝ համաձայն Լրացուցիչ պայմանների:

2.2. Պայմանագրով չեն կարող ապահովագրվել տնային կենդանիները, որոնք.

2.2.1. պայմանագրի կնքման պահին փոքր են 8 ամսականից, կամ մեծ՝ 8 տարեկանից (բացառությամբ վերակնքումների դեպքում),

2.2.2. չունեն նույնականացնող Չիպ: Եթե Պայմանագիրը կնքվել է Չիպ չունեցող տնային կենդանու համար, ապա Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբ է համարվում տնային կենդանուն չիպավորման և Չիպի համարը Ապահովագրողին տեղեկացման հաջորդ օրը:

2.2.3. վարակված են կենդանիների առանձնապես վտանգավոր հիվանդություններով (կատաղություն, սիբիրյան խոց, դաբաղ, խլախտ և այլն),

2.2.4. ներգրավված են անվտանգության պահպանման, որսորդության, ոստիկանական, ռազմական, մրցարշավային կամ այլ տիպի բարձր ռիսկայնություն ունեցող գործունեության մեջ, բացառությամբ ցուցահանդեսներին ներկայացնելը,

2.2.5. օգտագործվում են բուծման, լաբորատոր հետազոտությունների, փորձերի համար:

2.2.6. գյուղատնտեսության մեջ ներգրավված, արդյունաբերական կամ ցանկացած տիպի շահույթ ստանալու նպատակով օգտագործվող կենդանիները:

ԳԼՈՒԽ 3: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

3.1. Ապահովագրական պատահարը Պայմանագրով նախատեսված դեպքն է, որի տեղի ունենալու ժամանակ Ապահովագրողը պարտավորվում է Ապահովագրված անձին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում:

3.2. Դժբախտ պատահար է համարվում արտաքին, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ), չմտադրված, անկանխատեսելի պայմանների և հանգամանքների զուգադիպումը, որի դեպքում Ապահովագրված անձի կամքից անկախ մարմնական վնասվածքների հետևանքով վնաս է հասցվում ապահովագրված տնային կենդանու առողջությանը:

Պայմանագրի շրջանակներում Դժբախտ պատահարի պատճառ կարող է հանդիսանալ.

ա.պայթյունը,
բ.կայծակի հարվածը,
գ.հոսանքահարումը,
դ.տրանսպորտային միջոցի կողմից վրաերթը,
ե.այլ կենդանիների հարձակումը,
զ.հրդեհը,
է.բնական աղետները,
ը.կոտրանքով գողությունը, ավազակությունը, այլ անձանց կողմից դիտավորությամբ վնասումը,
թ. օտար մարմինների կուլ տալը:

3.3. Կանոնների համաձայն՝ դժբախտ պատահար չեն համարվում բոլոր հիվանդությունները կամ դրանց բարդացումները (ինչպես նախկինում ախտորոշված, այնպես էլ առաջին անգամ հայտնաբերված), ինչպես նաև այն հիվանդությունները կամ դրանց բարդացումները, որոնք առաջացել (զարգացել) են արտաքին գործոնների ազդեցության հետևանքով:

3.4. Ապահովագրական ռիսկն, առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով՝ առաջացող վնասի հնարավորությունն է:

3.5. Կանոնների համաձայն և կողմերի համաձայնությամբ՝ Պայմանագրով կարող են ապահովագրվել Ապահովագրված անձի հետ կապված հետևյալ ռիսկերը՝

ա. Տնային կենդանու՝ դժբախտ պատահարի հետևանքով առաջացած անասնաբուժական ծախսերը,
բ. դժբախտ պատահարի հետևանքով ապահովագրված տնային կենդանուն առավել ցավ պատճառող վիճակներից ազատելու նպատակով էվթանազիան,
գ. Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվություն՝ կապված տնային կենդանու կողմից երրորդ անձանց առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման հետ:

3.6. Կանոնների 3.5-րդ կետում նշված իրադարձությունները չեն համարվում ապահովագրական պատահարներ, եթե դրանց առաջացման պատճառներն են.

3.6.1. առանց այլ կենդանիների կամ մարդկանց չվնասելու համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու (թոկ, դնչկալ և այլն)՝ ապահովագրված կենդանուն դուրս հանելը,

3.6.2. Ապահովագրված կենդանիների անցանկալի վերարտադրությունը կանխող միջոցառումների ժամանակին չձեռնարկումը,

3.6.3. Ապահովագրված անձի, Ապահովադրի կամ Շահառուի, ինչպես նաև այն անձանց, որոնք գործում են վերջիններիս հանձնարարությամբ, կողմից կատարված միտումնավոր գործողությունները,

3.6.4. Ապահովագրված կենդանու առողջությանը հասցված վնասը՝ Ապահովագրված անձի կողմից տրանսպորտային միջոցի վարելու ընթացքում՝ առանց այդ դասի տրանսպորտային միջոցի վարելու իրավունքի, կամ այլ անձի կողմից, ով չունի տվյալ տրանսպորտային միջոցը վարելու իրավունք, և տրանսպորտային միջոցի վարումը փոխանցվել է վերջինիս Ապահովագրված անձի կողմից,

3.6.5. Ապահովագրված անձի կողմից տրանսպորտային միջոցի վարումը՝ գտնվելով ալկոհոլի, թմրադեղերի, թունավոր նյութերի ազդեցության տակ կամ Ապահովագրված անձի կողմից տրանսպորտային միջոցի վարումը ալկոհոլի կամ թմրադեղերի ազդեցության տակ գտնվող անձին փոխանցելը, և դրա հետևանքով Ապահովագրված կենդունու առողջությանը հասված վնասը,

3.6.6. միջուկային պայթյունը, ճառագայթումը կամ ճառագայթումից վարակումը, ռազմական գործողությունները, զորաշարժերը կամ դրանց հետևանքները, ժողովրդական հուզումները, պատերազմը, քաղաքացիական պատերազմը, գործադուլները կամ ահաբեկչական գործողությունները,

3.6.7. Ապահովագրված կենդանու հղիությունը կամ դրա ընդհատման հետևանքով պատահարներն ու բարդացումները:

3.7. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, ապա չեն հատուցվում ստորև նշված ծախսերը.

3.7.1. պատվաստումներ,

3.7.2. պրոֆիլակտիկ բուժզննումներ,

3.7.3. այլ կանխարգելիչ միջոցառումների ծախսեր,

3.7.4. տզի խայթոց, իր բարդացումներով, եթե չեն իրականացվել համապատասխան կանխարգելիչ միջոցառումները (օր. հատուկ դեղամիջոցի կամ վզկապի օգտագործում):

3.7.5. պրոթեզավորման հետ կապված ցանկացած ծախս, ներառյալ արհեստական մարմնի մասերի և ազդրի, արմունկի կամ ծնկերի հոդերի փոխարինման հետ կապված միջամտությունները,

3.7.6. վանդակների, զամբյուղների կամ անկողնային ցանկացած այլ պարագաների գնումը, որոնք անհրաժեշտ են բուժման կամ կենդանու ընդհանուր բարեկեցությունը բարելավվելու համար,

3.7.7. վարքագծային կամ ֆինանսական խնդիրներից ազատվելու նպատակով էվթանազիան,

3.7.8. ցանկացած տեսակի սննդի, սննդային և/կամ կենսաբանական ակտիվ հավելումների (վիտամիններ և այլն), կոսմետիկ կամ խնամքի պարագաների կամ հանքային աղերի ձեռքբերման ծախսեր,

3.7.9. առանց համապատասխան անասնաբույժի ցուցումների կատարված անասնաբուժական ծառայություններ, դեղորայք, հոսպիտալացում, հետազոտություններ կամ այլ պարագաների ձեռքբերում,

3.7.10. ապահովագրության ժամկետի ավարտից 30 օր հետո կատարված բժշկական ծախսերը,

3.7.11. ֆիզիոթերապևտիկ, վերականգնողական, սանատոր-առողջարանային միջոցառումներ կամ բուժում,

3.7.12. ոչ ավանդական, այլընտրանքային (ոչ գիտական) բուժում ու ախտորոշման մեթոդներ, փորձարարական կամ հետազոտական մեթոդներով բուժում, կազդուրման ավանդական համակարգեր, հեռաբժշկության հետ կապված ծառայություններ,

3.7.13. այնպիսի բժշկական ծառայություններից օգտվելու հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն կապված չեն տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով առաջացած վնասվածքների հետ:

3.8. Քաղաքացիական պատասխանատվության ներքո ապահովագրական են համարվում պատահարները, որոնք նկարագրված են «Քաղաքացիական պատասխանատվության Լրացուցիչ Պայմաններում»:

ԳԼՈՒԽ 4: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

4.1. Ապահովագրական գումարը Պայմանագրում սահմանված դրամական գումարն է, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում վճարել ապահովագրական հատուցում:

4.2. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարը հանդիսանում է տվյալ Պայմանագրի շրջանակներում տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարների գծով Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա գումարների ընդհանուր սահմանաչափը:

4.3. Ապահովագրական գումարի չափը որոշվում է կողմերի համաձայնությամբ:

4.4. Պայմանագիր կնքելիս Ապահովագրողը սահմանում է ապահովագրավճարի չափը, որը պետք է վճարի Ապահովադիրը:

4.5. Ապահովագրավճարը ենթակա է ամբողջությամբ վճարման Պայմանագրի կնքման պահին, եթե այլ վճարման կարգ նախատեսված չէ Պայմանագրով:

4.6. Տարաժամկետ վճարման կարգ սահմանող պայմանագրերի դեպքում Ապահովագրողը իրավունք ունի ապահովագրական հատուցումը վճարել միայն պայմանագրի ամբողջ ժամկետի համար ապահովագրավճարի վճարումից հետո:

4.7. Ապահովագրավճարը անկանխիկ եղանակով վճարելու դեպքում Ապահովադիրը պարտավոր է վճարման հանձնարարականում հղում կատարել հաշվի համարին և ամսաթվին, որի հիման վրա կատարվում է ապահովագրավճարի վճարումը, և/կամ ապահովագրության պայմանագրի (վկայագրի) համարին, որի համար իրականացվում է ապահովագրավճարի վճարում:

4.8. Անկանխիկ եղանակով վճարելու դեպքում ապահովագրավճարը համարվում է վճարված Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտքագրվելու պահին:

4.9. Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի չսահմանել լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, չծանուցել այդ մասին Ապահովադրին, միակողմանի դադարեցնել Պայմանագիրը, և ազատվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:

4.10. Ապահովագրողը իր հայեցողությամբ իրավունք ունի սահմանել ապահովագրավճարի վճարման լրացուցիչ ժամկետներ և այդ մասին ծանուցել Ապահովադրին: Լրացուցիչ ժամկետի սահմանման դեպքում Ապահովագրողը միևնույն է ազատվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:

ԳԼՈՒԽ 5: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագիրը կնքվում է Ապահովադրի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա:

5.2. Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից (Ապահովագրված անձից) պահանջել ներկայացնել փաստաթղթեր և տեղեկություններ ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականության որոշման նպատակով:

5.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի (տարաժամկետ վճարման դեպքում) պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

5.4. Ապահովագրողի՝ Պայմանագրով սահմանված պատասխանատվությունը դադարում է Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին կամ սույն Կանոններում և/կամ Պայմանագրում նախատեսված այլ դեպքերում:

ԳԼՈՒԽ 6: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Ապահովագրողն ապահովագրական պատահարի կարգավորման համար 6.3-րդ կետում նշված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է քննել հայտը և կայացնել ապահովագրական հատուցում վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու մասին որոշում:

6.2. Ապահովագրական հատուցումը կատարվում է հատուցման մասին որոշման կայացումից հետո ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

6.3. Ապահովագրական պատահարի հետևանքով անասնաբուժական ծախսերի դեպքում՝ Ապահովագրական հատուցում ստանալու համար Շահառուն պարտավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- ապահովագրական վկայագրի բնօրինակը կամ պատճենը,
- ապահովագրական հատուցում ստանալու դիմում (Ապահովագրողի կողմից սահմանված ձևով) ապահովագրական պատահարի մանրամասն նկարագրությամբ և ապահովագրական հատուցում ստանալու եղանակների նշմամբ (կանխիկ կամ բանկային փոխանցումով),
- անասնաբուժական հաստատության կնիքով և իրավասու անձի ստորագրությամբ հաստատված փաստաթուղթ (էպիկրիզ, քաղվածք ամբուլատոր-բժշկական քարտից, բժշկի եզրակացություն, բժշկական հաստատության կողմից տրված տեղեկանք, հիվանդության պատմություն և այլն), որը պետք է պարունակի, կատարված լաբորատոր կամ գործիքային հետազոտությունները, վերջնական ախտորոշումը և նշանակված բուժումը, անասնաբույժի անուն ազգանունը և կոնտակտային տվյալները,

- կատարված վճարումը հավաստող փաստաթղթերի՝ ՀԴՄ կտրոնի՝ ծախսերի մանրամասն բացվածքի հետ միասին (դրամարկղի մուտքի անդորրագրի (օրդեր) և այլն), կանխիկ վճարման հաշվի բնօրինակները,
- ապահովագրական հատուցում ստացող անձի ինքնությունը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը,
- ապահովագրական հատուցման որոշման կայացման համար այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

6.4. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է ապահովագրական հատուցման դիմումը ներկայացնել ապահովագրական պատահարից ոչ ուշ, քան 60 օր հետո:

6.5. Ապահովադիրը կամ Շահառուն պարտավոր է Կանոններով սահմանված ապահովագրական հատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել ապահովագրական հատուցման դիմումի ներկայացման օրվանից 60 օրվա ընթացքում: Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 6 (վեց) ամիս, եթե Ապահովադիրը (Շահառուն) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու մասին:

6.6. Անհրաժեշտության դեպքում Ապահովագրողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկություններ է ստանում իրավապահ մարմիններից, անասնաբուժական կամ բժշկական հաստատություններից և այլ կազմակերպություններից՝ կապված ապահովագրական պատահարի հանգամանքների հետ:

6.7. Ապահովագրական հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով ուղարկվում է (կամ տրամադրվում է առձեռն) Ապահովադրին (Շահառուին):

6.8. Ապահովագրողն իրավունք ունի հետաձգել ապահովագրական հատուցման որոշման կայացումը կամ վճարումը.

- եթե նրա մոտ առաջացել են հիմնավոր կասկածներ Ապահովագրված անձի (Շահառուի) ապահովագրական հատուցում ստանալու իրավունքի վերաբերյալ,
- եթե առկա է տվյալ պատահարի կարգավորման հետ ուղղակի կամ անուղղակի կերպով առնչվող՝ հարուցված քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ,
- մինչև Ապահովագրողի կողմից ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկություն ունեցող հաստատություններից և կազմակերպություններից փաստաթղթերի ստացումը, ինչպես նաև մինչև ապահովագրական պատահարի վկաներից վկայությունների ստացումը:

6.9. Ապահովագրական հատուցում կարող է վճարվել նաև Շահառուի ներկայացուցչին համապատասխան լիազորագրի առկայության դեպքում:

6.10. Ապահովագրական հատուցում ստանալու համար ներկայացված բոլոր բժշկական փաստաթղթերում պետք է ներառվեն Ապահովագրված կենդանու Չիպի համարը, տարիքը, հայտարարված պատահարի ամսաթիվը և հանգամանքները, նշանակված և իրականացված բուժումը, բուժման սկիզբը և ավարտը, կատարված անասնաբուժական միջոցառումների անվանումները, անասնաբույժի կողմից սահմանված ախտորոշումը՝ հաստատված պրակտիկայում ընդունված հետազոտությունների մեթոդներով, բոլոր ախտորոշիչ հետազոտությունների (լաբորատոր, կլինիկական, լուսաճառագայթային և այլն) արդյունքները, իրականացված վիրահատության արձանագրությունը:

ԳԼՈՒԽ 7: ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

7.1. Պայմանագրի գործողությունը դադարում է, եթե.

7.1.1. Պայմանագրի գործողության ժամկետն ավարտվել է,

7.1.2. Ապահովագրված կենդանին մահացել է,

7.1.3. Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի չափով Ապահովագրողը կատարել է ապահովագրական հատուցում վճարելու գծով իր պարտավորությունները,

7.1.4. Ապահովադիրը կամ Ապահովագրողը հրաժարվել է Պայմանագրից, ընդ որում՝ Կողմերն իրավունք ունեն հրաժարվել Պայմանագրից ցանկացած պահի՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ ծանուցելով մյուս Կողմին, պայմանով, որ հրաժարման պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը չի վերացել,

7.1.5. Ապահովագրական ընկերության ապահովագրական գործունեության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել,

7.1.6. Պայմանագիրը լուծվել է Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ,

7.1.7. Պայմանագիրը լուծվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կամ Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված այլ հիմքերով,

7.1.8. դատարանի կողմից Պայմանագիրն անվավեր է ճանաչվել: Այս դեպքում Ապահովագրողը պարտավոր է վերադարձնել Ապահովադրին ապահովագրավճարներն ամբողջությամբ, իսկ Ապահովադիրը՝ հատուցել Ապահովագրողի կրած ծախսերը:

7.2. Պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրողը նետտո ապահովագրավճարից համամասնորեն վերադարձնում է Պայմանագրի չլրացած օրերի գծով վճարված ապահովագրավճարի և կատարված հատուցումների դրական տարբերությունը: Նետտո ապահովագրավճար է համարվում ապահովագրավճարի ռիսկային մասնաբաժինը, որն առաջանում է բրուտտո ապահովագրավճարի և գործառնական, Պայմանագրի թողարկման համար կատարվող այլ ծախսերի՝ բեռնվածության տարբերությունից: Բեռնվածության գումարը կազմում է առաջին տարվա ապահովագրավճարի 25%-ը և յուրաքանչյուր հաջորդ տարվա ապահովագրավճարի 15%-ը:

7.3. Ապահովագրողի նախաձեռնությամբ Պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրողն ապահովագրավճարից համամասնորեն վերադարձնում է Պայմանագրի չլրացած օրերի գծով վճարված ապահովագրավճարը առանց որևէ պահումների:

ԳԼՈՒԽ 8: ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Ապահովադիրն իրավունք ունի.

8.1.1. ստանալ ցանկացած բացատրություն Պայմանագրի շրջանակներում,

8.1.2. ստանալ վկայագրի կրկնօրինակը բնօրինակի կորստի դեպքում,

8.1.3. Պայմանագրի կնքման ժամանակ նշել Շահառուին (մեկ կամ մի քանի անձ)՝ Ապահովագրված անձի մահվան դեպքում հատուցում ստանալու համար,

8.1.4. Ապահովագրողի համաձայնությամբ Պայմանագրում կատարել փոփոխություններ,

8.1.5. վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը:

8.2. Ապահովադիրը պարտավոր է.

8.2.1. Պայմանագրով սահմանված ժամկետներում և չափով վճարել ապահովագրավճարները,

8.2.2. Պայմանագրի շրջանակներում հայտնել Ապահովագրողի համար հետաքրքրություն ներկայացնող ստույգ տեղեկատվություն,

8.2.3. գրավոր ձևով հայտնել Ապահովագրողին փոփոխությունների մասին, որոնք նա մտադիր է ներառել Պայմանագրի պայմաններում,

8.2.4. ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին կատարվածի մասին,

8.2.5. Ապահովագրողին ցանկացած հնարավոր միջոցով անհապաղ (իսկ 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ նաև գրավոր) հայտնել Պայմանագրի գործողության ընթացքում Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին ներկայացված հանգամանքների, ռիսկի աստիճանի փոփոխության մասին, ինչպես նաև հետևյալ հանգամանքների դեպքում.

8.2.5.1. Ապահովագրված անձի գործունեության վայրի կամ բնակության վայրի փոփոխություն,

8.2.5.2. Ապահովագրված կենդանու բնակության պայմանների փոփոխություն,

8.2.5.3. Ապահովագրված կենդանու մոտ հիվանդությունների ախտորոշում,

8.2.5.4. Ապահովագրված կենդանու առողջության վատթարացում,

8.2.5.5. այլ տնային կենդանու/կենդանիների ձեռքբերում:

8.3. Ապահովագրողն իրավունք ունի.

8.3.1. ստուգել Ապահովադրի, Ապահովագրված անձի և Շահառուի կողմից ներկայացված տեղեկատվությունը,

8.3.2. մերժել ապահովագրական հատուցման (ամբողջությամբ կամ մասնակի) վճարումը, եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը) կամ Շահառուն.

8.3.2.1. չի կատարել Կանոններով և Պայմանագրով սահմանված իր պարտականությունները,

8.3.2.2. խախտել է Կանոններով սահմանված ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին դիմելու և/կամ հատուցման որոշման կայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման ժամկետները,

8.3.2.3. Պայմանագիրը կնքելիս կամ դրա գործողության ընթացքում հայտնել է իրականությանը չհամապատասխանող, կեղծ տեղեկություններ կամ ապահովագրական պատահարի հետ կապված հանգամանքների վերաբերյալ հայտնել է անարժանահավատ տեղեկատվություն,

8.3.2.4. կատարել է այնպիսի գործողություններ, որոնց արդյունքում անհնարին է դարձել Ապահովագրողի կողմից ապահովագրական պատահարի հանգամանքների պարզմանն ուղղված գործողությունների իրականացումը (անհնարին է դարձել ապահովագրական պատահարի հետաքննության անցկացումը),

8.3.2.5. Պայմանագրի կնքման պահին և դրա գործողության ընթացքում հայտնել էր Ապահովագրված կենդանու առողջական վիճակի մասին սխալ տեղեկություններ, կամ թաքցրել ռիսկի աստիճանի վրա ազդող տեղեկություններ,

8.3.2.6. Կանոններով սահմանված կարգով անհապաղ չի տեղեկացրել ապահովագրական պատահարի հայտանիշեր ունեցող իրադարձության ի հայտ գալու մասին,

8.3.2.7. չի ներկայացրել փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարի հայտանիշեր ունեցող իրադարձության բնույթի և պատճառների հաստատման համար և նրա կապը ի հայտ եկած հետևանքների հետ,

8.3.2.8. Պայմանագրով նախատեսված ժամկետներում ապահովագրավճարի ոչ լրիվ վճարման կամ չվճարման դեպքում,

8.3.3. պահանջել վճարված հատուցման վերադարձ, եթե ապահովագրական հատուցման վճարումից հետո ի հայտ են գալիս ապահովագրական հատուցման վճարումը մերժելու սույն Կանոններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:

8.4. Ապահովագրողը պարտավոր է.

8.4.1. ծանոթացնել Ապահովադրին ապահովագրության Կանոններին,

8.4.2. թողարկել ապահովագրական վկայագիր,

8.4.3. Կանոններով սահմանված ժամկետներում և կարգով կայացնել ապահովագրական հատուցման վճարման կամ մերժելու մասին որոշում,

8.4.4. Կանոններով սահմանված դեպքում, ժամկետներում և կարգով վճարել ապահովագրական հատուցումը,

8.4.5. պահպանել ապահովագրական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները:

ԳԼՈՒԽ 9: ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ

9.1. Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի՝ առանց ապահովադրի համաձայնության, փոփոխություն և/կամ լրացում կատարելու Կանոններում:

9.2. Կանոններում փոփոխություն և/կամ լրացում կատարելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է ոչ ուշ, քան նման փոփոխությունների կատարումից մեկ ամիս առաջ դրա մասին գրավոր ծանուցել Ապահովադրին:

9.3. Կատարված փոփոխությունների և/կամ լրացումների հետ համաձայն չլինելու դեպքում Ապահովադիրն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը:

ԳԼՈՒԽ 10: ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

10.1. Կանոնների համաձայն կնքված ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի շրջանակներում Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Անհամաձայնության (համաձայնության չգալու) դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 11. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Սույն Կանոնների համաձայն Ապահովագրողի կողմից Ապահովադրի (Շահառուի) հասցեին ուղարկված բոլոր ծանուցումները և գրությունները համարվում են պատշաճ ծանուցված, եթե պահպանվել են հետևյալ պայմաններից որևէ մեկը.

11.1.1. ծանուցումն ուղարկվել է փոստային առաքմամբ՝ ապահովագրության Պայմանագրում կամ հայտային դիմումում նշված հասցեով,

11.1.2. ծանուցումն ուղարկվել է SMS հաղորդագրությամբ՝ ապահովագրության Պայմանագրում կամ Ապահովադրի (Շահառուի) և/կամ նրա լիազոր անձի կողմից տրամադրած այլ փաստաթղթի մեջ (հայտային դիմում, հայտարարություն, և այլն) նշված հեռախոսահամարով,

11.1.3. ծանուցումն ուղարկվել է էլեկտրոնային նամակի տեսքով՝ ապահովագրության Պայմանագրում կամ հայտային դիմումում նշված էլեկտրոնային հասցեով:

11.2. Հասցեների և/կամ վերոնշյալ ռեկվիզիտների փոփոխության դեպքում ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է այդ մասին ողջամիտ ժամկետում տեղեկացնել Ապահովագրողին: Եթե Ապահովագրողին ողջամիտ ժամկետում չեն տեղեկացրել հասցեների և/կամ այլ ռեկվիզիտների փոփոխության մասին, ապա Ապահովադրին (Շահառուին) ուղարկված բոլոր ծանուցումները/գրությունները հին հասցեներով/ռեկվիզիտներով համարվում են պատշաճ ծանուցված այն ամսաթվից, երբ այդ ծանուցումները ստացվել են այդ հասցեներում:

ԳԼՈՒԽ 12. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1. Սույն՝ Քաղաքացիական Պատասխանատվության Ապահովագրության Լրացուցիչ պայմաններով (այսուհետ՝ Լրացուցիչ պայմաններ) ԷՖԵՍ ԱՓԲԸ-ն կնքում է գույքային շահերի կամավոր ապահովագրության պայմանագրեր՝ կապված ֆիզիկական անձանց (բացի Ապահովադրից, Շահառուից և նրանց տնայինքի անդամներից) առողջությանը հասցված վնասի հատուցման պատասխանատվության ռիսկի հետ:

12.2. Ապահովագրության Պայմանագրով երրորդ անձանց առողջությանը պատճառված վնասների հատուցման պատասխանատվության ռիսկը կարող է ապահովագրվել ինչպես ի օգուտ Ապահովադրի, այնպես էլ այլ անձանց, ում վրա այդպիսի պատասխանատվություն կարող է դրվել:

Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրով, սույն Լրացուցիչ պայմանների 12.6 կետով սահմանված ապահովագրական պատահարների գծով ապահովագրված անձինք են.

12.2.1. Ապահովագրված կենդանու սեփականատերերը, նրանց տնայինքի անդամները,

12.2.2. Ապահովագրված կենդանու սեփականատերերի համաձայնությամբ առաջինիս ժամանակավոր կառավարող անձինք:

12.3. Ապահովագրական ռիսկ է համարվում ենթադրելի պատահարը, որի տեղի ունենալու համար էլ կնքվում է ապահովագրության Պայմանագիրը:

12.4. Ապահովագրական պատահար է համարվում ապահովագրության Պայմանագրով նախատեսված սույն Լրացուցիչ պայմանների 12.6.1-12.6.2 կետերում նշված իրադարձություններից

մեկի տեղի ունենալը, որի հետևանքով Ապահովագրողը պարտավորվում է իրականացնել ապահովագրական հատուցում:

12.5. Սույն Լրացուցիչ պայմանների համաձայն ապահովագրական պատահար են համարվում Ապահովագրված կենդանու ագրեսիվ և/կամ անկանխատեսելի գործողությունների հետևանքով ապահովագրության Պայմանագրով սահմանված ապահովագրված տարածքում Ապահովագրված անձի ոչ դիտավորյալ մեղավորությամբ ֆիզիկական անձանց առողջությանը հասցված վնասի համար պատասխանատվություն:

12.6. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրով, սույն Լրացուցիչ պայմաններով ապահովագրության են ենթակա պատասխանատվությունը, կապված.

12.6.1.երրորդ անձանց մահվան, աշխատունակության կորստի հետ, վնասվածքների հետ,

12.6.2. երրորդ անձանց պատճառված վնասվածքների հետ :

Վնասի պատճառման փաստը պետք է հաստատվի դատական մարմինների (դատարաններ, արբիտրաժներ, և այլն) ուժի մեջ մտած որոշումով (վճռով) կամ արտադատական կարգով՝ Ապահովագրողի համաձայնությամբ Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից երրորդ անձանց կյանքին, առողջությանը հասցված վնասի հատուցման գույքային հայտի ընդունման միջոցով, կամ Ապահովագրողի համաձայնությամբ և ներկայությամբ ստորագրված հաշտության համաձայնագրով:

12.7. Ապահովագրական ծածկույթը տարածվում է միայն այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

12.8. Սույն Լրացուցիչ պայմանների համաձայն ապահովագրությունը չի տարածվում քաղաքացիական պատասխանատվության վրա, որը կապված է (պատահարները չեն համարվում ապահովագրական պատահարներ).

12.8.1.ՀՀ գործող օրենսդրությամբ պարտադիր պատվաստումների չանցկացմանը, որը ուղիղ պատճառ է հանդիսացել պատահարի առաջացմանը,

12.8.2. տրանսպորտային միջոցների տնօրինման, տիրապետման կամ օգտագործման հետ,

12.8.3. Պայմանագրի կամ Ապահովադրի (Ապահովագրված անձի) հետ համաձայնության հիման վրա ծագած ֆինանսական պարտավորությունների հետ, ինչպես նաև վճարումների հետ, որոնք կատարվել են բնեղեն ձևով պարտավորությունների կատարման փոխարեն կամ որպես պատժամիջոցներ, կամ բաց թողնված օգուտի վերաբերյալ պահանջներ,

12.8.4. այնպիսի վնասների պահանջների հետ, որոնք գերազանցում են ՀՀ գործող Օրենսդրությամբ սահմանված ծավալները և չափերը (գերազանցող մասով),

12.8.5. Ապահովագրական տարածքից դուրս հասցված վնասների պահանջների հետ,

12.8.6. եթե այլ բան նախատեսված չէ՝ միևնույն ապահովագրության պայմանագրով ապահովագրված Ապահովադիրների (Ապահովագրված անձանց)՝ միմյանց դեմ ներկայացված պահանջների հետ,

12.8.7. պատերազմական գործողությունների, ապստամբությունների, քաղաքացիական հուզումների, զինված խմբավորումների կամ ահաբեկիչների հետևանքով կամ պատճառով առաջացած վնասների հետ,

12.8.8. Կենդանիների (թռչունների) պահպանման, տնօրինման՝ օրենսդրությամբ սահմանված անվտանգության կանոնների խախտման հետ:

12.9. Ապահովագրության Պայմանագրով նշված Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափը (ապահովագրական գումարը) համարվում է միասնական սահմանաչափ բոլոր տեսակների պատահարների և վնասների համար:

Ապահովագրության Պայմանագրով կարող են սահմանվել պատասխանատվության առանձին սահմանաչափեր. Ապահովագրության յուրաքանչյուր ռիսկի համար, յուրաքանչյուր պատահարի համար, յուրաքանչյուր տուժողի համար, և այլն:

12.10. Ապահովագրական հատուցման ընդհանուր գումարը ապահովագրության ժամկետի ընթացքում տեղի ունեցած բոլոր պատահարների գծով համախառն, չի կարող գերազանցել այդ ժամկետի համար Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափը:

12.11. Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության գծով ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը կամ Ապահովագրված անձը, ի լրումն Կանոնների 10-րդ կետով սահմանված պարտավորություններից, պարտավոր են.

12.11.1. Անհապաղ, բայց ցանկացած դեպքում ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրեն հասանելի այնպիսի կապի միջոցներով, որ հնարավոր լինի ֆիքսել տեղեկացման փաստը, տեղեկացնել Ապահովագրողին սույն Լրացուցիչ պայմանների համաձայն ապահովագրական պատահարի բնույթ ունեցող դեպքի կապակցությամբ իրեն ներկայացվող բոլոր պահանջների վերաբերյալ,

12.11.2. Ապահովագրողին ցուցաբերել բոլոր հնարավոր աջակցություն կազմակերպելու և իրականացնելու համար արտադատական պաշտպանություն՝ վնասի հատուցման պահանջի ներկայացման դեպքում,

12.11.3. Ապահովագրողին ներկայացնել իրեն հասանելի ամբողջ տեղեկատվությունը և փաստաթղթերը, որոնք հնարավորություն կտան բացահայտելու ապահովագրական պատահարի բնույթը, պատճառները, հետևանքները և վնասի չափը,

12.11.4. Չիրականացնել հատուցումներ, ամբողջությամբ կամ մասնակի չընդունել մեղավորություն, ինչպես նաև առանց Ապահովագրողի համաձայնության իր վրա չվերցնել ուղղակի կամ անուղղակի պարտավորություններ՝ երրորդ անձանց կողմից ներկայացված պահանջի կարգավորման համար:

12.12. Ապահովագրական հատուցումը հաշվարկվում է ՀՀ Օրենսդրությամբ սահմանված՝ վնասների հատուցման չափով, և իրականացվում է ապահովագրական պատահարի փաստի, պատճառների և հանգամանքների պարզելուց և վնասի չափի որոշումից հետո, որոնք կատարվում են իրավասու մարմինների կողմից տրամադրված փաստաթղթերի, ինչպես նաև վնասի չափը և պատահարի հանգամանքները հավաստող այլ փաստաթղթերի հիման վրա:

12.13. Այն դեպքում, եթե բացակայում է ապահովագրական պատահար տեղի ունենալու մասին վեճ, տուժողի մոտ առկա է ապահովագրական հատուցման ստացման իրավունք, իսկ Ապահովադրի (Ապահովագրված անձի) մոտ՝ այն հատուցելու պարտավորություն, առկա է ապահովագրական պատահարի, վնասի և վնասի չափի միջև պատճառահետևանքային կապ, և առկա է Ապահովագրողի համաձայնությունը, ապա հայտարարված պահանջները բավարարվում են և ապահովագրական հատուցումը վճարվում է արտադատական (կամավոր) կարգով:

12.14. Ապահովագրական հատուցման արտադատական կարգով վճարման դեպքում վնասի չափի որոշումը և ապահովագրական հատուցման չափը որոշում է Ապահովագրողը՝ հիմք ընդունելով

պատահարի փաստերի, պատճառների, հանգամանքների և հետևանքների վերաբերյալ իրավասու մարմինների փաստաթղթերը (բժշկական հաստատություններ, բժշկական-աշխատանքային մասնագիտական խորհուրդներ, սոցիալական ծառայության օրգաններ, և այլն), հաշվի առնելով տեղեկանքները, հաշիվ-ապրանքագրերը, նախահաշիվները և կատարված ծախսերը/անհրաժեշտ կատարվելիք ծախսերը հավաստող այլ փաստաթղթերը:

12.15. Ապահովագրական պատահարի պատճառների և հանգամանքների կամ վնասի չափի վերաբերյալ վեճերի առկայության դեպքում ապահովագրական հատուցումը իրականացվում է դատարանի (կամ արբիտրաժի) կողմից օրինական ուժի մեջ մտած որոշման կամ վճռի հիման վրա, կամ Ապահովագրողի համաձայնությամբ և ներկայությամբ ստորագրված հաշտության համաձայնագրի հիման վրա:

12.16. Ապահովագրական հատուցումը իրականացվում է Ապահովագրողի պահանջով ներկայացվող հետևյալ փաստաթղթերի առկայության դեպքում.

12.16.1. Ապահովադրի (Ապահովագրված անձի) կամ նրա ներկայացուցչի կողմից.

12.16.1.1. Ապահովագրական պատահարի մասին տեղեկացում Ապահովագրողին՝ Կանոններով և/կամ Պայմանագրով սահմանված ձևով և ժամկետներում,

12.16.1.2. Ապահովագրության Պայմանագրի բնօրինակ,

12.16.1.3. Իրավասու մարմինների տեղեկանքներ և այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են երրորդ անձանց վնաս պատճառած ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը (ԱԻՆ, ՈՍ, և այլն), և որոնք թույլ են տալիս դատել պատահարի հանգամանքների, բնույթի և հետևանքների, ինչպես նաև վնասի չափի և մեղավոր կողմի մասին,

12.16.1.4. Ապահովագրողի կողմից սույն Լրացուցիչ պայմանների և/կամ ապահովագրության Պայմանագրի համաձայն հատուցման ենթակա Ապահովադրի (Ապահովագրված անձի) ծախսերի փաստը, չափը և նպատակը հավաստող փաստաթղթեր,

12.16.1.5. Վնաս կրած երրորդ անձի պահանջ (գրավոր հայտ),

12.16.1.6. Ապահովագրողի պահանջով՝ Դատարանի ուժի մեջ մտած որոշում:

Ապահովագրողի որոշմամբ սույն թվարկումը կարող է կրճատվել՝ համաձայն սույն Լրացուցիչ պայմաններով նախատեսված դեպքերի:

12.16.2. Վնաս կրած երրորդ անձանց կամ նրանց ներկայացուցիչների կողմից.

12.16.2.1. Ապահովագրական պատահարի մասին դիմում-հայտ՝ Ապահովագրողի կողմից սահմանված կամ Ապահովագրողի հետ համաձայնեցված ձևով կամ եղանակով՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու կամ բացահայտելու ամսաթվից հետո 3 ամսվա ընթացքում: Սույն ժամկետի չպահպանման դեպքում Ապահովագրողը իրավունք ունի մերժել ապահովագրական հայտը՝ ժամկետի ուշացման համար հիմնավոր պատճառաբանություն չստանալու դեպքում:

12.16.2.2. Ապահովագրողի պահանջով՝ օրինական ուժի մեջ մտած դատական որոշման (վճռի) վավերացված կրկնօրինակը և կատարման ակտի բնօրինակը (դատական կարգավորման դեպքում, բացառությամբ հաշտության համաձայնագրով կարգավորման դեպքում),

12.16.2.3. Երրորդ անձանց պատճառված վնասի փաստը հավաստող տեղեկանք կամ փաստաթուղթ՝ իրավասու մարմինների կողմից (ԱԻՆ, ՈՍ, և այլն), որոնք հնարավորություն կտան դատել պատահարի բնույթի, հանգամանքների և հետևանքների, վնասի մասշտաբի և մեղավոր կողմերի վերաբերյալ,

12.16.2.4. Վնաս կրած երրորդ անձի ներկայացուցչի կողմից ապահովագրական հատուցումը ստանալու դեպքում՝ նոտարով հաստատված լիազորագիր,

12.16.2.5. Տուժողը՝ ապահովագրական պատահարի արդյունքում առողջության վնասների համար լրացուցիչ ծախսերի, բուժման և դեղորայքի համար (որոնց համար տուժողը պետ.պատվերի շրջանակներում չի ստանում բուժօգնություն) ներկայացնում է.

12.16.2.5.1. Բժշկական հաստատության կողմից տրամադրված հիվանդության պատմության քաղվածք,

12.16.2.5.2. Բժշկական հաստատության ծառայությունների համար կատարված ծախսերը հավաստող փաստաթղթեր,

12.16.2.5.3. Դեղորայքների ձեռքբերումը հավաստող փաստաթղթեր:

12.17. Փաստաթղթերը Ապահովագրողի համաձայնությամբ կարող են տրամադրվել նաև էլեկտրոնային եղանակով՝ Ապահովագրողի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկման միջոցով, կամ տարբեր կրիչներով տրամադրման եղանակով (DVD, CD, հիշողության կրիչ, և այլն):

12.18. Փաստաթղթերը պետք է լինեն բացառապես հայերեն լեզվով կազմված կամ թարգմանված: ՀՀ տարածքից դուրս տրամադրված փաստաթղթերը ընդունվում են միայն ՀՀ տարածքում դրանց լեգիտիմության ճանաչման պարագայում (ապոստիլային հաստատում, նոտար, և այլն):

12.19. Ապահովագրողի որոշմանբ սույն կետում թվարկված փաստաթղթերի ցանկը կարող է կրճատվել, եթե դրանք չեն ազդում ռիսկի գնահատման, ապահովագրական պատահարի փաստի հավաստման, ինչպես նաև վնասի չափի և հատուցում ստացող անձի որոշման վրա:

12.20. Ապահովագրական հատուցման գումարի մեջ ներառվում են.

12.20.1. Ֆիզիկական անձանց կյանքին կամ առողջությանը հասցված վնասների դեպքում.

12.20.1.1. Առողջության վերականգման համար անհրաժեշտ ծախսերը (բուժման և դեղորայքի) ,

12.20.1.2. Ապահովագրողի հետ համաձայնեցված ծախսերը՝ Ապահովադրի (Ապահովագրված անձի) մեղավորության աստիճանի, պատահարի հանգամանքների և վնասի չափի նախնական բացահայտման նպատակով:

12.21. Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրությամբ ապահովագրական հատուցումը ուղղակիորեն իրականացվում է վնաս կրած անձանց՝ համաձայն վերջիններիս կողմից ներկայացված դիմումի, պահանջների և հատուցման ստացման եղանակի: Ապահովագրողը իրավունք ունի հատուցել այն անձին, ում պատասխանատվությունը ապահովագրված է, օրինական ուժի մեջ մտած դատական վճռի համար կատարված ծախսերի համար՝ Պայմանագրով սահմանված չափով կամ սահմանաչափի սահմաններում:

12.22. Ապահովագրողը իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը, եթե տեղի է ունեցել.

12.22.1. Ապահովադրի (Ապահովագրված անձի) կամ վնաս կրած երրորդ անձանց դիտավորյալ գործողություններ՝ միտված ապահովագրական պատահարի տեղի ունենալուն, բացառությամբ երրորդ անձանց կյանքին և առողջությանը պատճառված վնասների: Վերջիններիս դեպքում Ապահովագրողը իրավունք ունի կիրառել հետադարձ պահանջի իրավունք՝ մեղավոր անձի նկատմամբ, հատուցված վնասի չափով:

12.22.2. Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու ժամկետների խախտում կամ վնասի փաստը և չափը հավաստող փաստաթղթերի չներկայացումը, եթե դա ազդել է ապահովագրական հատուցման վճարման Ապահովագրողի պարտավորության վրա:

12.22.3. Դիտավորյալ անգործություն, որի արդյունքում չեն ձեռնարկվել վնասի նվազեցման համար ողջամիտ և հասանելի միջոցներ:

12.23. Սույն Լրացուցիչ Պայմաններով չկարգավորվող բոլոր այլ դեպքերի համար կիրառվում են ապահովագրության Կանոնները:

12.24. Սույն Լրացուցիչ պայմանների և Կանոնների միջև անհամապատասխանության դեպքում առաջնահերթությունը տրվում է սույն Լրացուցիչ պայմաններին: